

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱՐԻԿ ԳԱԳԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՊԱՐՄԿԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժ.02.02- «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական

համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Լ. Ս. Հովսեփյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գ. Կ. Խաչատրյան

բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Լ. Վ. Ղազարյան

Առաջատար

կազմակերպություն՝ Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. հունիսի 27- ին՝ ժամը 15:00–ին ՀՀ ԳԱԱ
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՂ–ի՝ Լեզվաբանության
019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր
Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների

թեկնածու, դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը: Թեև ժամանակակից պարսկերենի քերականությանը նվիրված աշխատությունները բավականին մեծ քանակությամբ հրատարակվում են թե՛ Իրանում, թե՛ այլ երկրներում, այնուհանդերձ դեռևս գոյություն ունեն թեմաներ, որոնք համեմատաբար քիչ ուշադրության են արժանացել ուսումնասիրողների կողմից: Պարսից լեզվի քերականության հարցերի համապարփակ և լիարժեք ուսումնասիրությունը ժամանակակից լեզվաբանական, այդ թվում նաև զուգադրական լեզվաբանության հայեցակետերով, կարող է էապես նպաստել նաև պարսկերենի ուսուցման արդյունավետությանը և որակի բարձրացմանը: Սույն ատենախոսությունը փորձ է՝ համեստ ներդրում ունենալու ժամանակակից պարսկերենի անվանական քերականական կարգերի նկարագրության մեջ: Անշուշտ, չենք կարող ժխտել նաև այն հանգամանքը, որ պարսկերենը Հայաստանում ամենամեծ պահանջարկ վայելող օտար լեզուներից մեկն է, որ պայմանավորված է Իրանի հետ հարևան լինելով և որպես հետևանք՝ հայ և իրանցի ժողովուրդների միջև գործուն և աշխույժ շփումներով ու փոխայցելություններով: Շարունակական աճ են ապրում առևտրատնտեսական, մշակութային, գիտական, կրթական կապերը երկու երկրների միջև, որ նաև նոր պահանջներ է դնում պարսից լեզվի ուսուցման ոլորտում: Այսօր արդեն զգացվում տարբեր ոլորտներում (տնտեսական, գիտական, իրավական, տեխնիկական և այլն) մասնագիտացված բարձրակարգ թարգմանիչների կարիք, և ավանդաբար գրական ստեղծագործությունների նյութի հիման վրա իրականացվող ուսուցումը այժմ չի կարող լիարժեք լուծել նշված խնդիրը: Բիարկե, մենք ականատեսն ենք հատկապես վերջին շրջանում այս ուղղությամբ ձեռնարկվող զգալի աշխատանքների, որոնք կատարվում են պարսից լեզվի հայ մասնագետների կողմից: Միաժամանակ կարծում ենք, որ պարսկերենի քերականության տեսական խնդիրների խոր և բազմակողմանի վերլուծությունները, տարբեր լեզվական մակարդակների և միավորների զուգադրումը հայերենի հետ կարող են իրենց նպաստը բերել ժամանակակից պարսկերենի ուսուցմանը և ուսումնասիրությանը այլ հետազոտողների կողմից:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է քննության ենթարկել ժամանակակից հայերենի և ժամանակակից պարսկերենի անվանական քերականական կարգերը՝ հենվելով զուգադրական լեզվաբանության սկզբունքների և մեթոդների վրա: Հետազոտությունն իրականացնելիս դրվել են հետևյալ խնդիրները.

ա) համեմատել ժամանակակից հայերենի և ժամանակակից պարսկերենի թվի քերականական կարգերը՝ իրենց ենթակարգերով, երկու լեզուների թվային համակարգերի համապատասխան միավորները՝ ցույց տալու համար դրանց նմանություններն ու տարբերությունները,

բ) վերլուծել երկու լեզուներում առկայացման քերականական իմաստի դրսևորումների առանձնահատկություններն ու ընդհանրությունները, որոնք ցույց են տալիս թե տվյալ առարկան ինչ հարաբերության մեջ է գտնվում հաղորդակցման այս կամ այն մասնակցի նկատմամբ, կամ արդյո՞ք հայտնի է, թե՞ անհայտ է, ուսումնասիրել երկու լեզուների հոդերի (անորոշ, որոշյալ, դիմատաացական) գործառնության ին մանրամասնություններն ու նրբերանգները,

գ) զուգադրական քննության ենթարկել ժամանակակից հայերենի հոլովի քերականական կարգը և ժամանակակից պարսկերենի նույնիմաստ քերականական կառույցները, բացահայտել հնարավոր իմաստային զուգորդումները առանձին քերականական ձևերի հետ,

դ) վերլուծել ժամանակակից հայերենի և ժամանակակից պարսկերենի ածականի համեմատության աստիճանների իմաստային արժեքների համադրելիությունը կամ տարբերությունը, ցույց տալ երկու լեզուներում ածականի համեմատության աստիճանների արտահայտման ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:

Ատենախոսության տեսական-մեթոդաբանական հիմքը: Գերմանացի լեզվաբան Ռ. Շտերնեմանը առաձևացնում է զուգադրական քննության երկու մեթոդ, որոնք անվանում է համապատասխանաբար *միակողմանի և երկկողմանի քննություն*: Դրանցից առաջինը՝ միակողմանի քննությունը, ենթադրում է, որ զուգադրվող լեզուներից մեկի տվյալ քերականական միավորը ընդունվում է որպես համեմատության գերակա եզր, որի հետ համեմատվում է մյուս լեզվի համարժեք քերականական իմաստ արտահայտող միավորը: Մյուս մեթոդի՝ երկկողմանի քննության հիմքում ընկած է զուգադրվող միավորների քերականական իմաստների հիման վրա ձևավորված պայմանական մի հարացույց՝ այսպես կոչված *համեմատության երրորդ անդամ (tertium comparationis)*, որի հիման վրա զուգադրական քննության են ենթարկվում երկու լեզուների համապատասխան քերականական արտահայտության միջոցները¹: Երկկողմանի քննության դեպքում համեմատվող միավորները կարող են սկզբունքորեն տարբերվել, որ պայմանավորված է զուգադրվող լեզուների առանձնահատկություններով: Իսկ միակողմանի քննության դեպքում պետք է հատկապես ուշադրություն դարձնել ելակետային լեզվի զուգադրվող քերականական միավորի իմաստային արժեքին, այսինքն՝ թե այն որքանով է համընկնում նպատակակետ լեզվի զուգադրվող քերականական միավորի հետ:

Ատենախոսությունը շարադրելիս հիմնականում առաջնորդվել ենք Ռ. Շտերնեմանի նկարագրած մեթոդներից երկրորդով՝ *երկկողմանի քննությամբ*, այսինքն՝ որպես համեմատության եզր ծառայել են ինքնին քերականական իմաստները, սպա ցույց է տրված, զուգադրվող լեզուներից յուրաքանչյուրն

¹ St' u Штернеманн Р. И колл., Введение в контрастивную лингвистику, // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, М., 1989, стр. 144-179.

ինչպես և ինչ քերականական միջոցներով է իրացնում դրանց քերականական արտահայտությունը: Իսկ այն դեպքերում, երբ երկու լեզուներում ունենք որոշակի քերականական իմաստների արտահայտման միջոցների անհամարժեքություն (*ինչպիսիք խնդրատական իմաստներն են, որոնք հայերենում արտահայտվում են հոլովներով, իսկ պարսկերենում կապերի կամ շարադասության միջոցով*), այդ դեպքում որպես զուգադրության գերական եզր վերձված են հայերենի քերականական ձևերը:

Ատենախոսության գիտական նորույթը: Լեզվաբանական տիպաբանությունը և նրա հետ սերտորեն առնչվող զուգադրական լեզվաբանությունը, զարգանալով արևմտյան երկրներում, որպես ուսումնասիրության առարկա հիմնականում դիտարկում էին եվրոպական լեզուները, իսկ արևելյան լեզուները, այդ թվում նաև պարսկերենը, ավելի դժվարամտչելի լինելով լեզվաբանական տարբեր ուղղությունների ներկայացուցիչներին, որոշակիորեն դուրս էր մնում վերջիններիս ուշադրության շրջանակից: Արևելյան լեզուների ուսումնասիրությունը սահմանափակվում էր հիմնականում պատմահամեմատական լեզվաբանական և ընդհանուր արևելագիտական ուղղվածության աշխատություններով: Այն դեպքում, երբ գրեթե բոլոր եվրոպական լեզուների համար ստեղծվում էին զուգադրական քերականություններ, պարսկերենը, ի թիվս այլ արևելյան լեզուների, դուրս էր մնում լեզվաբանական այս գիտաճյուղի ուսումնասիրության ոլորտից: Դրա պատճառը նաև այն էր, որ հումանիտար և հասարակական գիտությունները, այդ թվում, բնականաբար, նաև լեզվաբանությունը, Իրանում թույլ էր զարգացած, որի հետևանքով այդ լեզվի ավանդական քերականությունը հիմնականում ներկայացված նկարագրական բնույթի աշխատություններով՝ առանց էական տեսական բաղադրիչի: Վերջին տասնամյակներում այդ բացն այնուհանդերձ լրացվում է՝ ի նկատի ունենալով մի կողմից բուն Իրանում լեզվաբանական ուղղությունների աստիճանական զարգացումը, մյուս կողմից՝ օտար ուսումնասիրողների համար պարսկերենի յուրացման առավել մատչելի դառնալու հանգամանքը: Աստիճանաբար ավեանում են պարսկերենի քերականությանը նվիրված գիտական աշխատությունները, ը սույն ատենախոսությունը նպատակ ունի լրացնելու այդ շարքը՝ հաշվի առնելով նաև գուղագրական լեզվաբանության կիրառական նշանակությունը լեզվի ուսուցման և թարգմանության մեջ:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Սկսած քսաներորդ դարի 50-ական թվականներից՝ զուգադրական լեզվաբանության նկատմամբ զգալի հետաքրքրություն առաջացավ հատկապես ԱՄՆ-ում՝ նկատի ունենալով այն տեսակետը, որ լեզվաբանական այդ ուղղությունը լայն հորիզոններ է բացում օտար լեզուների ուսուցման համար: Թեև հետագայում բավականին թվով մասնագետներ լիովին կամ մասնակի կասկածի տակ էին դնում դրա արդյունավետությունը, զուգադրական լեզվաբանությունը մի շարք հարցերում

ունի արդյունավետ կիրառման լուրջ հնարավորություն²: Լեհ լեզվաբան Վ. Մարտոնը նշում է, որ օտար լեզու ուսուցանող մասնագետների համար գուգադրական քերականության ձեռնարկները կարող են օգտակար լինել համակարգելու մատուցվող ուսումնական նյութը հաշվի առնելով ուսանողի մայրենի լեզվի քերականական համարկարգի առանձնահատկությունները: Նույն կերպ ուսանողի համար նման ձեռնարկները կարող են պիտանի լինել առավել դյուրին և համակարգված ընկալելու ուսումնասիրվող լեզվում առկա այն քերականական իրողությունները, որոնք տարբեր են իր մայրենի լեզվում: Նշվածից զատ, գուգադրական քերականության ուսումնասիրությունները կարող են օգտակար լինել օտար լեզուների ուսուցման ձեռնարկներ մշակողների համար³: Տարբեր լեզուների գուգադրական քերականությունները կարող են օգտակար լինել նաև թարգմանության մեջ, հատկապես երբ գործ ունենք քերականորեն և ոճականորեն բարդ տեքստերի հետ: Այդ դեպքերում գուգադրական քննությունը թույլ է տալիս ուշադրությունը սևեռել հատկապես տվյալ տեքստի քերականական առավել բարդ երևույթների վրա և որոշելու դրանց համարժեքությունը երկու լեզուներում⁴:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են «Արևելագիտության հարցեր» (ԵՊՀ) և «Կանթեդ» գիտական հոդվածների ժողովածուներում, «Բանբեր» (Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան), «Հայագիտական հանդես» և «Գիտական տեղեկագիր» (Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան) հանդեսներում տպագրված հոդվածներում:

Ատենախոսությունը քննարկվել է և երաշխավորվել է պաշտպանության Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի ընդհանուր լեզվաբանության ամբիոնում:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից և չորս գլուխներից, որոնք ներառում են ենթագլուխներ, եզրակացություններից և գրականության ցանկից:

Ատենախոսության ներածության մեջ քննարկվում են գուգադրական լեզվաբանության՝ որպես առանձին գիտաճյուղի զարգացման համառոտ պատմությունը, հիմնական սկզբունքները, մասնագետների տեսակետները դրա գործնական և տեսական նշանակության վերաբերյալ: Այնուհետև անդրադարձ է կատարվում նաև այն հիմնական աշխատություններին, որոնք հիմք են ծառայել

² St' u Sanders C., Recent developments in contrastive analysis and their relevance to language teachers// *Contrastive linguistics and the language teacher*, Pergamon Press, Oxford/ New York, 1981, pp. 21-33.

³ St' u Marton W., Pedagogical implications of contrastive analysis// *Contrastive linguistics and the language teacher*, Pergamon Press, Oxford/ New York, 1981, pp. 157-171.

⁴ St' u Керквуд Г. В., Перевод как основа контрастивного лингвистического анализа, // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, М., 1989, стр. 341-350.

սույն ատենախոսության համար: Համառոտ ներկայացվում են նաև ժամանակակից պարսկերենի քերականության գիտական ուսումնասիրությունները, դրանց ժամանակագրական բաժանումները, հիմնական ուղղությունները:

Ատենախոսության առաջին գլխում զուգադրական քննության է ենթարկվում ժամանակակից հայերենի և ժամանակակից պարսկերենի թվի քերականական կարգը՝ իր ենթակարգերով: Անվանական քերականական կարգերի շարքում գոյականի թիվն ունի ամենից լայն տարածվածություն և այս կամ այն կերպ իր արտահայտությունն է գտնում բոլոր լեզուներում: Աշխարհի լեզուների մակերեսային դիտարկումն անգամ թույլ է տալիս նշելու, որ դրանք բոլորն ունեն թվի քերականական իմաստի արտահայտման միջոցներ՝ հիմնականում գոյականների համար, սակայն այդ լեզուների մի մասում թվի կարգը կարող է վերաբերել նաև այլ խոսքի մասերի, ինչպիսիք են բայը կամ ածականը: Թվի քերականական կարգի ուսումնասիրությունն առնչվում է լեզվական համակարգի բոլոր հիմնական տարրերին, չնայած տվյալ դեպքում մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում դրա՝ անվանական իմաստներով կիրառությունը՝ պայմանավորված սույն աշխատանքի թեմատիկ ընդգրկմամբ:

Մասնավորապես, նշված գլխի առաջին ենթագլխում ներկայացվում են ընդհանուր դիտարկումներ թվի քերականական կարգի մասին, լեզվաբանների տեսակետները այդ կարգի քերականական բնութագրի, արտահայտման միջոցների, քերականական իմաստների վերաբերյալ: Ուշադրություն դարձվում այն դեպքերին, երբ համեմատվում են եզակի-հոգնակի և եզակի-երկակի-հոգնակի հակադրություններ ունեցող լեզուները, քանի որ առաջին տիպի լեզուների հոգնակին իմաստային տեսանկյունից «ծածկում է» երկրորդ տիպի լեզուների և՛ երկակին, և՛ հոգնակին: Իսկ ինչ վերաբերում է հենց երկակի թվին, ապա այս դեպքում հաճախ տվյալ լեզվի գոյականների մի մասի համար երկակի թվի առկայությունը չի նշանակում, որ այն պարտադիր է ողջ լեզվական համակարգի համար, և կարող է ունենալ միայն սահմանափակ կիրառություն: Թվի քերականական կարգը ցույց է տալիս քանակային հարաբերությունները, որոնք գոյություն ունեն իրականության մեջ և արտացոլված են տվյալ լեզուն կրողների գիտակցության մեջ, ինչպես նաև ունեն համապատասխան ձևաբանական արտահայտություն:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվում են բուն թվային իմաստների արտահայտության և բովանդակության պլանները երկու լեզուներում: Եվ՝ հայերենում, և՛ պարսկերենում թվի քերականական կարգը արտահայտվում է եզակի և հոգնակի հակադրությամբ: Այս երկեզր հակադրության մեջ եզակի թիվը ցույց է տալիս առաջին եզրը՝ այսինքն այն, որ խոսքի առարկան մեկն է: Հոգնակի թիվը ցույց է տալիս նույն հարաբերության երկրորդ եզրը՝ այսինքն այն, որ խոսքի առարկան մեկից ավելի է: Երկու լեզուներում էլ երկակի թիվը, որպես թվակարգի առանձին ենթակարգ, գոյություն

չունի, թեև պարսկերենում կան որոշակի երկակի իմաստավորմամբ արաբերենից փոխառյալ քերականական ձևեր, իսկ հայերենում պահպանվել են որոշ մնացուկային ձևեր:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում ներկայացվում են այն դեպքերը, երբ թվային իմաստի արտահայտությունը քերականորեն կարևոր չէ և մոլված է հետին պլան, այսինքն՝ առկա է եզակիության և հոգնակիության հակադրության չեզոքացում: Դա հնարավոր է այն դեպքերում, երբ տվյալ գոյականը դիտարկվում է որպես համընդհանուր անուն և ցույց է տալիս տվյալ հատկանիշով առարկան ընդհանրապես: Լեզվաբանության մեջ նման դեպքերը բնութագրվում են *բացարձակ թիվ* եզրույթով⁵: Ոչ ընդգծված թվային իմաստի արտահայտման դեպքում ժամանակակից հայերենը և ժամանակակից պարսկերենը հիմնականում առաջնորդվում են նույն սկզբունքով: Եզակիաձև գոյականը կարող է նշանակել ինչպես մեկ առարկա, այնպես էլ կիրառվել որպես տվյալ առարկայի դասի ընդհանրացված անվանում: Նկատելի է նաև, որ մի շարք դեպքերում պարսկերենում միահյուսված են թվի և առկայացման քերականական կարգերը: Մասնավորապես, անորոշ հոդը, արտահայտելով գոյականի՝ խոսքում առաջին անգամ հիշատակվելու կամ անծանոթ լինելու հանգամանքը, միաժամանակ դրան օժտում է եզակիության իմաստավորմամբ: Պարսկերենում այս երևույթի առկայությունը Ի. Մմիռնովան բացատրում է նրանով, որ այդ լեզվում *ձևաբանորեն աննշույթ անունը (неоформленное имя)* չի պարունակում թվի, ինչպես նաև որևէ այլ քերականական իմաստ և չեզոք է ցանկացած քերականական կարգի նկատմամբ⁶: Հեղինակը այս համատեքստում տարբերակում է գրո ձևույթով գոյականը, որը, ըստ նրա, որևէ քերականական հակադրության հարացույցի անդամներից մեկն է՝ որոշակի քերականական նշանակությամբ, և վերը նշված՝ *ձևաբանորեն աննշույթ անունը*: Ըստ նրա՝ երկրորդի դեպքում, ի տարբերություն առաջինի, քերականական ձևույթի բացակայությունը նշանակում է նաև դրան համարժեք քերականական իմաստի բացակայություն, մինչդեռ *գրո վերջավորությունը* անպայման քերականական իմաստ է արտահայտում: Միևնույն ժամանակ, *ձևաբանորեն աննշույթ անվան* քերականակորեն չեզոք լինելու հանգամանքը հնարավորություն է տալիս նրան հանդես գալու տարբեր քերականական իմաստներով, որոնք արտահայտվում են խոսքի ենթատեքստում⁷:

Նշված գլխի չորրորդ ենթագլխում ներկայացվում են անեզականության և անհոգնականության երևույթները: Անհոգնականությունը և անեզականությունը թվի քերականական կարգի յուրատեսակ դրսևորումներ են, որ հատուկ են այն գոյականներին, որոնք իրենց իմաստային կառուցվածքի մեջ ունեն բառիմաստին

⁵ St' u Corbett, G. G., Number, Cambridge University Press, Cambridge, 2004, pp. 9-12.
⁶ St' u Смирнова И. А., Категория числа в языках с немаркированным именем (на материале иранских языков), Вопросы языкознания, н. 2, 1981, стр. 77-88.
⁷ Ն ու յ ն տե դ ու մ, էջ 80:

անմիջականորեն կապված թվային իմաստ, որը բացառում է հակադիր իմաստի առկայությունը: Այլ կերպ ասած՝ անհոգնականները և անեզականները չունեն թվային իմաստի հակադիր ձևերից մեկը, կամ եթե այն առկա է, ապա ցույց չի տալիս եզակիի և հոգնակիի իմաստային որոշակիացում⁸: Բազմաթիվ լեզուների հետազոտությունները ցույց են տալիս, որ թվի քերականական կարգը չի ենթադրում միայն և միայն քանակական իրողությունների արձանագրում, ինչպես, օրինակ, որևէ առարկայի մեկ կամ մի քանի հատ լինելու հանգամանքը: Գոյականների մի մասի պարագայում կիրառվելիս թվի գաղափարը կարող է արտահայտել տարբեր նրբերանգային իմաստներ, որոնք ուղղակիորեն չեն հանգում քանակի հասկացությանը⁹: Ժամանակակից հայերենում և պարսկերենում այս երևույթը իմաստային ընդհանրություններ ունի: Հայերենում սովորաբար առանձնացվում են անհոգնականների հետևյալ խմբերը՝ *զանգվածանյութայնության, վերացական անհոգնական գոյականներ, անհոգնական հավաքականներ, անհոգնական հատուկ անուններ և եզակի՝ բնության մեջ մեկ հատ առարկայի անուններ*: Պարսկերենում, ըստ էության, չկան այնպիսի գոյականներ, որոնցից ձևաբանորեն հնարավոր չլինի կազմել հոգնակի ձևեր: Այլ կերպ ասած, պարսկերենում բուն անհոգնականներ չկան, այլ կան հարաբերական, ենթատեքստային անհոգնականներ: Անհաշվելի գոյականների մյուս խումբը անեզականներն են (Pluaralia tantum): Դրանք ունեն միայն հոգնակի ձև, իսկ եզակի բառաձևը իսպառ կամ գրեթե իսպառ բացակայում է: Անեզականները նույնպես կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի. բուն անեզականներ, որոնք ընդհանրապես չունեն եզակի ձևեր, և եզակի-հոգնակի անհամարժեքությամբ պայմանավորված անեզականներ: Անեզականների կիրառությունը և՛ հայերենում, և՛ պարսկերենում խիստ սահմանափակ է: Հայերենի պարագայում անեզականությունը մեծ տարածում է ունեցել գրաբարում, սակայն ժամանակակից հայերենում անեզականների քանակը փոքր է: Անեզական են, մասնավորապես, հոգնակիի ձևով կիրառվող մի շարք հատուկ անուններ: Սակայն այդ հատուկ անունները, որոնք ոչ միայն հայերենում, այլև ուրիշ լեզուներում հանդես են գալիս որպես ձևով անեզականներ, պարսկերենում չունեն հոգնակիի քերականական ցուցիչ: Օրինակ՝

ألب / *alp* – *Ալպեր*

مالديو / *māldiv*– *Մալդիվներ*

فيليبين / *filipin*– *Ֆիլիպիններ*

Այս երևույթը պարսկերենին վերաբերող լեզվաբանական գրականության մեջ մինչև այժմ որևէ կերպ մեկնաբանված չէ: Մենք կարող ենք

⁸ Ste ' u Кацнельсон С. Д., Типология языка и речевое мышление, Л., 1972, стр. 28-29.

⁹ Ste ' u Storch A. and Dimmndal G. J., Storch A. and Dimmndal G. J., Number constructions and semantics, Amsterdam/ Philadelphia, 2014, pp. 1-3.

ենթադրել, որ այս դեպքում հատուկ անունների անհոգնական լինելու կանոնը պարսկերենում բավական խիստ և հստակ է գործում, որ անհնար է դարձնում որևէ հատուկ անվան հոգնակիի քերականական ցուցիչի հավելումը:

Առաջին գլխի հինգերորդ ենթագլխում դիտարկվում է հավաքական թվի կիրառությունը երկու լեզուներում: Հավաքական թիվը արտահայտում է միասեռ, որոշակի հատկանիշով միավորվող առարկաների ամբողջություն: Է. Ադայանը նշում է. «Բացի եզակի և հոգնակի թվերից՝ գոյություն ունի նաև թվի մեկ այլ արտահայտություն՝ այսպես կոչված *հավաքկան թիվ*: Կան բազմաթիվ բառեր, որոնք արտահայտում են առարկաների քանակը ոչ թե որպես եզակի (մեկ) կամ հոգնակի (մեկից ավելի), այլ որպես հավաքական ամբողջություն. օրինակ՝ «*Համալսարանի ուսանողությունը հաջողությամբ ավարտեց քննաշրջանը*» նախադասության մեջ *ուսանողություն* բառն արտահայտում է մի հավաքական ամբողջություն, և եթե այդ միտքը հաղորդելու լինեինք այլ կերպ, պետք է ասեինք՝ *ուսանողները*: Այսպիսով հավաքականությունը ևս արտահայտում է հոգնակիություն, քանակի շատություն, բայց որպես մի ամբողջություն»¹⁰: Ընդհանրապես, տվյալ լեզվի քերականական ավանդույթից, *հավաքական* տերմինը կարող է կիրառվել տարբեր նշանակություններով, և միշտ չէ, որ այն, ինչ հավաքական է անվանվում մի լեզվում, համընկնում է նույն բառերով մեկ այլ լեզվում բնորոշվող հասկացության հետ:

Առաջին գլխի վեցերորդ ենթագլխում անդրադարձ է կատարվում երկու լեզուներում մոտավոր թվի իմաստի դրսևորմանը: Մոտավոր թիվը հայերենում արտահայտվում է համապատասխան բառային լրացումների օգնությամբ կամ ստանում է քերականական դրսևորում՝ միասին դրվում են թվային շարքում միմյանց հաջորդող կամ արժեքով մոտ թվականները՝ *մեկ-երկու օր, տաս-քսան հոգի* և այլն: Պարսկերենում ևս տվյալ քերականական հնարքը կիրառություն ունի՝ *یک دو نفر / yek do nafar (մեկ-երկու հոգի), سی چهل ملیون / si čehel meliun (երեսուն-քառասուն միլիոն)*: Պարսկերենում մոտավոր թվի արտահայտման մեկ այլ միջոց է գոյականի և թվականի այն կապակցությունը, երբ գոյականը դրվում է նախադաս և ստանում է անորոշ *ی / ye(i)* հոդը, այն դեպքում, երբ թվականի և գոյականի կապակցության համար սովորական է հակառակ շարադասությունը, օրինակ՝ *کارگری شش / kargari šes (շուրջ վեց բանվոր), درختی پنج / derakhti panj (շուրջ հինգ ծառ)*¹¹:

Յոթերորդ ենթագլխում անդրադարձ է կատարվում երկու լեզուներում թվի քերականական կարգի արտահայտության պլանին՝ թվակազմական վերջավորություններին:

¹⁰ Ադայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 489-490:

¹¹ Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, М., 2001, стр. 189-190.

Ութերորդ ենթագլխում քննվում է պարսկերենում ներքին թեքման միջոցով կատարվող հոգնակիակազմությունը:

Իններորդ ենթագլուխը նվիրված է երկու լեզուներում թվային համաձայնության արտահայտմանը:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է *առկայացման քերականական կարգին*: Գ. Ջահուկյանը նշում է, որ հայերենում առկայացման քերականական կարգն ունի երկու ենթակարգ՝ որոշյալություն և ցուցաստացականություն¹²: Դրանք համապատասխանաբար ներկայացված են երկրորդ գլխի առաջին և երկրորդ ենթագլուխներում: Առկայացումը կարևորագույն տեղ է զբաղեցնում անվանական քերականական կարգերի շարքում: Քերականական իմաստի տեսանկյունից առկայացման իմաստավորումը հանգույցային է որևէ առանձին վերցված խոսակցության կամ ամբողջ տեքստի իմաստային ընկալման համար, քանի որ այն ցույց է տալիս հաղորդակցվողների հարաբերության տեսակը խոսքի առարկայի նկատմամբ՝ թե արդյո՞ք տվյալ առարկան հայտնի է, անհայտ է, կամ թե այն ինչ հարաբերության մեջ է գտնվում հաղորդակցման այս կամ այն մասնակցի նկատմամբ: Ձևաբանական տեսանկյունից առկայացումը կարևոր է հոդերի՝ որպես յուրահատուկ քերականական ձևայինների ուսումնասիրման տեսանկյունից: Այս համատեքստում առկայացման քերականական կարգի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել հոդերի (անորոշ, որոշյալ, դիմա-ստացական) ծագումը և զարգացումը, նրանց գործառնությունից մանրամասնություններն ու նրբերանգները:

Հ. Աճառյանը, խոսելով հոդերի մասին, նշում է. «Քերականական լեզվով սրանք կոչվում են հոդ, և հատկապես շ կոչվում է որոշիչ հոդ, իսկ *ւի* անորոշ հոդ: Որոշիչ հոդը դրվում է բառի վրա այն ժամանակ, երբ նա ցույց է տալիս ամբողջ սեռի միջից վերցրած մի որոշ անհատ, անորոշ հոդ դրվում է այն ժամանակ, երբ վերցրած է լինում ըստ պատահման որևիցե մի անհատ: Այս երկուսը հատուկ են ոչ միայն հայերենին, այլև շատ բազմաթիվ լեզուների և համարյա համաշխարհային նշանակություն ունեն: Մյուս երկուսը տարբերվում են ըստ լեզվի: Ընդհանուր սեռը արդի աշխարհաբար հայերենում նշանակում է որոշյալ հոդով, այսպես նաև ֆրանսերենում, գերմաներենում, իտալերենում և գրեթե բոլոր եվրոպական լեզուներում: Մասնավոր ձևը աշխարհաբարում նշանակվում է առանց որևէ նշանի, պարզ բառի գործածությամբ»¹³:

Ատենախոսության երրորդ գլխում դիտարկվում են ժամանակակից հայերենի հոլովները և համապատասխան ինդոարաբական հարաբերությունների

¹² Ջահ ու կյ ան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսություն և իմունքները, Երևան, 1974, էջ 208-209:

¹³ Աճառյան Հր., Լիակատար քերականությունն հայոց լեզվի, համամատույց ամբ 562 լեզուներին, հ. 3, Երևան, 1957, էջ 934:

քերականական արտահայտության միջոցները ժամանակակից պարսկերենում: Առաջին ենթագլխում համառոտ ներկայացվում են նշված հարցի կապակցությամբ հայ լեզվաբանության մեջ առկա տեսակետները և քննարկումները, իսկ երկրորդից ուրբերոդ ենթագլխերում համապատասխանաբար ներկայացվում են հայերենի յոթ հոլովները՝ պարսկերենի համարժեք քերականական ձևերի գուգադրությամբ:

Անվանական քերականական կարգերի շարքում հոլովի կարգը յուրահատուկ տեղ է զբաղեցնում. այն լեզուները, որտեղ այն կա, առարկայի և գործողությունների կամ այլ առարկաների միջև հարաբերություններն արտահայտվում են հիմնականում հոլովական թեքությունների միջոցով: Մյուս կողմից, ի տարբերություն այլ անվանական քերականական կարգերի, հոլովը չունի առանձին, որոշակի, Ջահուկյանի բնորոշմամբ՝ «ինքնակա» քերականական իմաստ¹⁴: Այդ իմաստը արտահայտվում է միայն նախադասության շարահյուսական կառուցվածքի մեջ՝ ցույց տալով զանազան հարաբերություններ:

Հոլովի քերականական կարգի ուսումնասիրության գլխավոր հարցերից մեկը հոլովների ընդհանուր իմաստների սահմանման խնդիրն է: Ռ.Յակոբսոնը այս առթիվ նշում է. «Յուրաքանչյուր լեզվի որևէ հոլովի նշանակությունը պայմանավորված է տվյալ լեզվի հոլովական համակարգի առանձնահատկություններով, և այն կարող է որոշվել միայն այդ համակարգի կառուցվածքի հետազոտության միջոցով: Հնարավոր չէ սահմանել համընդհանուր, տվյալ լեզվի հոլովական հակադրությունների համակարգից դուրս հոլովական իմաստներ»¹⁵:

Հոլովների առաջացման մասին Հ. Աճառյանը նշում է. «Խոսակցության մեջ ոչ մի բառ անկախ չէ. նա կապված է մյուս բառերի հետ որոշ առնչությամբ, և այդ առնչությունը արտահայտվում է այլևայլ կողմնակի կամ օժանդակ բառերով: Ինչպես լեզվի կենսաբանության մեջ տեսել ենք, լեզվի հետագա շրջանում այդ օժանդակ բառերը մյուսներից շատ ավելի մաշվելով վերածվում են մասնիկների և կցվելով բուն բառերին՝ տալիս նրանց հարափոփոխ կերպարանք: Այն մասնիկները, որոնք, կցվելով անուններին, որոշում են նրանց զանազան առնչությունները ուրիշ բառերի հետ, առանց սակայն նրանց հիմնական իմաստը փոխելու և միայն մի հանգամանք կամ պարագա են ավելացնում նրան, կոչվում են *հոլովական մասնիկներ*, իսկ այն բառը, որին կցվել է հոլովական այս կամ այն մասնիկը, նրա հետ միասին վերցրած՝ դառնում է հոլով»¹⁶: Հոլովը տվյալ լեզվում որոշակի շարահյուսական գործառնությունների և դրանց համարժեք ձևաբանական ցուցիչների միասնությունն է: Ավանդական լեզվաբանության մեջ գերակա է այն տեսակետը, ըստ որի հոլովը համարվում է ձևաբանական կարգ, և *հոլով* եզրույթը

¹⁴ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 171:

¹⁵ Якобсон Р., Избранные работы, Москва, 1985, стр. 135-136.

¹⁶ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 313:

կիրառելի է միայն որոշակի հատուկ հոլովական ձևայինների օգնությամբ արտահայտված քերականական հարաբերություններ բնութագրելու համար: Մյուս կողմից՝ կարևոր է հաշվի առնել նաև հոլովի քերականական կարգի իմաստային բաղադրիչը ևս¹⁷: Ընդհանրապես, յուրաքանչյուր հոլով իմաստաբանորեն զուգորդվում է որևէ շարահյուսական պաշտոնի հետ, օրինակ ուղղական հոլովը՝ ենթակայի հետ, հայցական հոլովը՝ ուղիղ խնդրի հետ, և այլն¹⁸:

Ամերիկացի լեզվաբան Չ. Ֆիլմորը, ընդգծելով հոլովի քերականական կարգի իմաստային կողմը, տարբերակում է մակերեսային և խորքային հոլովական կառուցվածքների հարաբերություններ: Նա գտնում է, որ այն քերականական հարաբերությունները, որոնք սովորաբար արտահայտվում են հոլովական ձևայինների միջոցով, այլ լեզուներում կարող են արտահայտվել այլ քերականական միջոցների օգնությամբ, որը սակայն չի կարող խոչընդոտ համարվել դրանք ևս հոլովների շարքին դասելու համար: Էականը այն իմաստային դերն է, որը թելադրվում է տվյալ գոյականին բայական անդամի կողմից¹⁹:

Անվանական քերականական կարգերից է նաև ածականի համեմատության աստիճանների քերականական կարգը, որը ներկայացված է ատենախոսության չորրորդ գլխում: Իմաստային տեսանկյունից այն գրեթե նույն արժեքային հարաբերությունն է արտահայտում բոլոր լեզուներում: Ա. Ջելենեցկին այս կարգի իմաստային կառուցվածքում առանձնացնում է երկու հիմնական բևեռ՝ հավասարության, որն արտացոլվում է ածականի համեմատության դրական աստիճանի մեջ և անհավասարության, որն արտացոլվում են բաղդատական և գերադրական աստիճանների մեջ²⁰:

Ըստ Է. Ադայանի՝ ածականները ցույց են տալիս ոչ միայն որևէ առարկայի կամ միանման առարկաների խմբի հատկանիշ, այլև նրանց հատկանիշը՝ ուրիշ առարկաների նույն հատկանիշի համեմատությամբ, այսպիսով, ստացվում են ածականների համեմատության աստիճանները՝ դրական (positivus), բաղդատական (comparativus) և գերադրական (superlativus)²¹: Արտահայտության պլանում ածականների համեմատության աստիճանների տարբերությունները տարբեր լեզուներում հիմնականում հանգում են համադրական և վերլուծական քերականական ձևերին: Տարբեր լեզուների համեմատության աստիճանների քերականական ձևերը զուգադրելիս

¹⁷ Ярцева В. Н., Большой энциклопедический словарь: языкознание, Москва, 1998, стр. 355-356.

¹⁸ Ste´ u Comrie B., Language Universals and Linguistic Typology, Chicago, 1989, pp. 70-71.

¹⁹ Ste´ u Fillmore, Charles J., The Case for Case, In: E. Bach and R.T. Harms (eds.) (1968) Universals in Linguistic Theory. London: Holt, Rinehart and Winston, pp. 1-25 (Part Two).

²⁰ Ste´ u Зеленецкий А. Л., Сравнительная типология основных европейских языков, изд. «Академия», М., стр.135-136.

²¹ Ste´ u Ադայան Է. Բ., նշ վ. աշ խ. ,

անհրաժեշտ է հաշվի առնել, թե արդյոք դրանցով արտահայտած իմաստներն ունեն արժեքային տարբերություններ, թե ոչ, առկա են գուգաձևություններ, թե ոչ²²:

Եզրակացություններ

Ամփոփելով ատենախոսության մեջ տեղ գտած հիմնական դրույթները՝ հանգել հետևյալ ենք հետևյալ հիմնական եզրակացություններին.

1. Թվի քերականական կարգի ընդհանուր տեսական բնութագրի քննությամբ բացահայտվել են դրա բովանդակության և արտահայտության պլանների բաղադրիչները՝ բուն թվային՝ քանակական իմաստները, այդ իմաստների տիրույթից դուրս գտնվող այլ քերականական իմաստավորումները՝ անեզականությունը, անհոգնականությունը, հավաքականությունը և դրանց արտահայտման միջոցները: Չուգադրվող երկու լեզուներում էլ առկա է երկեզր՝ հոգնակի-եզակի թվային հակադրություն: Երկակի թիվը հայերենում հանդիպում է մնացուկային ձևով՝ որոշ բարբառներում, իսկ պարսկերենում առկա է միայն որպես արաբերենից մուտք գործած, սահամանափակ կիրառությամբ փոխառյալ քերականական երևույթ՝ միաժամանակ չդառնալով պարսկերենին հատուկ թվակարգային եզր:

2. Ընդհանրական թվային իմաստի արտահայտման հարցում ժամանակակից հայերենը և ժամանակակից պարսկերենը հիմնականում նույն սկզբունքն են կիրառում: Եզակիաձև գոյականը կարող է ցույց տալ ինչպես մեկ առարկա, այնպես էլ օգտագործվել որպես տվյալ առարկայի դասի ընդհանրացված անվանում: Մի շարք դեպքերում պարսկերենում միահյուսված են թվի և առկայացման քերականական կարգերը: Մասնավորապես, անորոշ հոդը, արտահայտելով գոյականի՝ խոսքում առաջին անգամ հիշատակվելու կամ անծանոթ լինելու հանգամանքը, միաժամանակ դրան օժտում է եզակիության իմաստավորմամբ:

3. Անհոգնականների և անեզականների քննությունը ցույց է տվել, որ նշված խմբերին պատկանող գոյականները երկու լեզուներում կիրառվելիս հիմնականում արտահայտում են նման քերականական իմաստներ, չնայած որոշ դեպքերում հնարավոր են տարամիտումներ:

4. Հավաքական գոյականների քերականական հատկություններին անդրադառնալով՝ կարող ենք փաստել, որ ժամանակակից հայերենը և ժամանակակից պարսկերենը հիմնականում նույն օրինաչափություններն են ցուցաբերում նման գոյականների և դրանց ստորոգյալի թվային համաձայնության ժամանակ:

²² Տե՛ս Chandler R., Hefler A., A Handbook of Comparative Grammar, New York, 1949, pp. 26-27.

5. Մոտավոր թվի քերականական իմաստի արտահայտման համար երկու լեզուներն էլ կարող են կիրառել թվային շարքում միմյանց հաջորդող թվականների կապակցությունները, ինչպես՝ *մեկ-երկու օր, հինգ-վեց ուսանող* և այլն:

6. Ձևաբանական տեսանկյունից երկու լեզուներն էլ կիրառում են կցական հոգնակիակազմություն՝ հոգնակերտ վերջավորությունների միջոցով: Ժամանակակից պարսկերենը, ի տարբերություն հայերենի, հոգնակերտ վերջավորությունների մակարդակում կարող է արտահայտել անձի և իրի, շնչավորի և անշունչի քերականական իմաստներ: Դրանից բացի՝ պարսկերենում կիրառելի է նաև ներքին թեքմամբ հոգնակիի կազմությունը, որն արաբերենի լեզվական ազդեցության հետևանք է: Այն լայն կիրառություն է ստացել պարսկերենում՝ դառնալով այդ լեզվի թվակարգի արտահայտության պլանի լիարժեք և անքակտելի բաղադրիչը:

7. Թվային համաձայնությանն անդրադառնալով՝ կարող ենք նշել, որ ժամանականկից հայերենում ենթական և ստորոգյալը պարտադիր համաձայնում են թվով, իսկ պարսկերենի դեպքում կանոնը պարտադիր է միայն անձ ցույց տվող և շնչավոր գոյականների՝ ենթակայի դերում հանդես գալու դեպքում: Իսկ երբ այդ գոյականները արտահայտում են իր, ապա համաձայնությունը կամընտրական է:

8. Ժամանակակից հայերենում և ժամանակակից պարսկերենում որոշակիորեն տարբերվում է այսպես կոչված «հարգանքի հոգնակին» (honorific). Եթե հայերենում այն կիրառելի է միայն երկրորդ դեմքի դերանվան պարագայում, ապա պարսկերենում այդ առմամբ կարող է դրվել նաև երրորդ դեմքի դերանունը կամ գոյականը:

9. Երկու լեզուներում որոշյալության ենթակարգն արտահայտվում է հիմնականում հոդով, սակայն եթե հայերենում դա որոշիչ հոդն է, ապա պարսկերենում հոդն անորոշություն է ցույց տալիս: Հետևաբար, հայերենում զրո ձևը արտահայտում է անորոշություն, իսկ պարսկերենում՝ որոշյալություն: Այնուհանդերձ, զրո ձևը լիարժեք որոշյալության քերականական իմաստ չի պարունակում, և այդ իմաստավորումն առավել արտահայտիչ է դառնում լրացուցիչ քերականական ցուցիչների կիրառման դեպքում: Մյուս կողմից՝ հայերենում առավել ընդգծված անորոշության իմաստ արտահայտում են *մի* և *մի* անորոշ հոդ պարունակող կապակցությունները:

10. Ցուցաստացական ենթակարգում առկա է նկատելի տարբերություն երրորդ դեմք եզակիի դեպքում. հայերենում այդ դիմային տարբերակի հոդը նույն որոշիչ հոդն է՝ *ը/ն*, իսկ պարսկերենում գործածվում է տարբեր հոդ՝ *یش* - *-yaš* (-*yes*): Դրանից բացի՝ ստացական հոդերը ժամանակակից պարսկերենում կարող են նաև փոխարինել նախադասության առանձին անդամի՝ հանդես գալով որպես խնդիր:

11. Հայերենի հոլովներն իրենց արտահայտած իմաստների մեծ մասով հիմնականում զուգորդվում են պարսկերենի որևէ համարժեք

քերականական ձևի հետ, մինչդեռ որոշ մասնակի իմաստավորումների դեպքում՝ տարամիտվում արտահայտության պլանում: Այսպես, հայերենի ուղղական հոլովը իր հիմնական կիրառություններով զուգորդվում են պարսկերենի՝ առանց քերականական ցուցիչի, այսպես կոչված «մաքուր ձևի» գոյականի հետ: Մինչդեռ կոչականի դերում հանդես գալիս՝ պարսկերենում գոյականները որոշ դեպքերում կարող են լրացուցիչ քերականական մասնիկներ ստանալ:

12. Հայերենի սեռական հոլովը իր հիմնական իմաստային առումներով պարսկերենում համապատասխանում է իզաֆեթային կառույցին, որոշ մասնակի դեպքերում հնարավոր է, որ դրա համարժեքը լինի *z/ az* կապով կազմված կապակցությունը:

13. Հայերենի տրական հոլովի արտահայտած քերականական իմաստները պարսկերենում հիմնականում զուգահեռ են *z/be* կապով կազմված կապակցություններին, թեև առանձին դեպքերում հնարավոր է, որ համարժեքը լինեն *dar* կապով կառույցը կամ իզաֆեթային կապակցությունը: Հայերենի հայցական հոլովի՝ պարսկերեն զուգահեռները դիտարկելիս հստակ տարբերակում ենք նկատում որոշյալ և անորոշ գոյականների միջև: Առաջինները ստանում են *z/rā* հետադիր կապը, անորոշները կիրառվում են գրո ձևով: Հայերենի բացառական հոլովի իմաստային առումները հիմնականում համարժեք են *z/ az* կապով կազմված կապակցություններին: Հայերենի գործիական հոլովի հիմնական քերականական իմաստները զուգահեռ են *z/bā* կապով կազմված կապակցություններով, որոշ դեպքերում դրա փոխարեն կարող է հանդես գալ *z/be* կապը, ավելի հազվադեպ՝ խիստ մասնակի կիևառություններին՝ նաև *z/ az* կապը: Հայերենի ներգոյական հոլովի առումները հիմնականում նույնական են *dar* կապով կազմված կապակցությունների հետ: Ընդգծված ներսի տարածության, ինչ-որ բանի մեջ գտնվելու իմաստ է արտահայտում (*tu* (-ye) կապը:

14. Ածականի համեմատության աստիճանները իմաստային տեսակետից երկու լեզուներում գրեթե նույն արժեքային հարաբերություններն են արտահայտում, իսկ տարբերությունները վերաբերում են գերազանցապես արտահայտության պլանին, որտեղ հայերենին հատուկ է վերլուծական կառույցը, իսկ պարսկերենին՝ կցականը:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ ժամանակակից հայերենը և ժամանակակից պարսկերենը անվանական քերականական կարգերի տիպաբանության հարցում ունեն բազմաթիվ նմանություններ, որոնք կարելի է բացատրել ինչպես երկու լեզուների ընդհանուր ծագումնաբանությամբ, որն ինքնին ենթադրում է քերականական համակարգի բազմաթիվ ընդհանրություններ, այնպես էլ երկու լեզուների՝ դարերի ընթացքում միմյանց հետ սերտ շփման հանգամանքով: Մինևնույն ժամանակ, գոյություն ունեն նաև քերականական իրողություններ, որոնք հատուկ են միայն լեզուներից մեկին: Այդպիսիք հիմնականում լեզուներից մեկի վրա արտաքին ազդեցության հետևանք է, որից մյուս լեզուն հիմնականում զերծ է մնացել, ինչպես, օրինակ, պարսկերենում ներքին թեքման միջոցով հոգնակիակազմությունը:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝

1. Գրիգորյան Գ., Առկայացման քերականական կարգը ժամանակակից հայերենում և պարսկերենում, «Արևելագիտության հարցեր», հ. 9, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 464-479:
2. Գրիգորյան Գ., Ժամանակակից հայերենի և պարսկերենի թվակազմական վերջավորությունների զուգադրական քննություն, «Գիտական տեղեկագիր» հ 1-2 (26-27), Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ, Երևան, 2016, էջ 147-155:
3. Գրիգորյան Գ., Անհոգնական և անեզական գոյականները ժամանակակից պարսկերենում և հայերենում. զուգադրական քննություն. «Հայագիտական հանդես», Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ, Երևան, 2016, էջ 59-66:
4. Գրիգորյան Գ., Անվանական քերականական կարգերը՝ որպես զուգադրական լեզվաբանության ուսումնասիրության առարկա, «Կանթեդ», հ. 1(66), «Ասողիկ» հրատ., Երևան, 2016, էջ 20-29:
5. Գրիգորյան Գ., Հայերենի սեռական հոլովը և պարսկերենի իզաֆեթային կապակցությունը. զուգադրական քննություն, «Բանբեր Վ. Բյուսովի անվ. ԵՊՀՀՀ: Բանասիրություն: Լեզվաբանություն» 1 (36), «Լինգվա» հրատ., Երևան, 2016, էջ 169-177:

ГАРИК ГАГИКОВИЧ ГРИГОРЯН

СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ИМЕННЫХ ГРАММАТИЧЕСКИХ КАТЕГОРИЙ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО И ПЕРСИДСКОГО ЯЗЫКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 – Общее и сравнительное языкознание

Защита состоится 27 июня 2016 г. В 15⁰⁰ часов на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка им. Р.Ачаряна НАН РА (адрес: Ереван, 0015, ул. Григора Лусаворича 15)

РЕЗЮМЕ

Исследование армяно-иранских языковых отношений всегда было в центре внимания армянских лингвистов. Научные работы на ранних этапах нового периода развития армянского языкознания были в основном посвящены вопросам этимологии и установлению степени родственных связей. То же самое можно сказать и о научных трудах европейских исследователей.

В традиционной персидской грамматике в определении явлений, присущих этому языку, использовалась арабская терминология, отражающая грамматические особенности самого арабского языка, но в дальнейшем стала применяться также и для персидского языка.

В научных трудах по грамматике персидского языка традиционно большое место было уделено вопросам морфологии и стилистики, а такие области, как фонетика, синтаксис, типология и др., в основном оставались вне круга научных интересов. Однако, в последние десятилетия ситуация постепенно меняется, и в трудах по грамматике персидского языка вышеперечисленные отрасли уже занимают значительное место. Настоящая диссертация, посвященная сопоставительному анализу именных категорий армянского и персидского языков, может пополнить ряд таких исследований.

Целью сопоставительного исследования двух или более языков является установление общих черт и различий грамматических структур сопоставляемых языков, а также выявление тех особенностей, которые в одностороннем рассмотрении языка могли бы оставаться незамеченными.

В диссертации в качестве предмета сопоставительного анализа избраны именные грамматические категории современного армянского и современного персидского языков.

Диссертация состоит из введения, четырех глав с соответствующими разделами, заключения и списка литературы.

В введении дается краткая история сопоставительного языкознания как особом направлении этой науки, приводятся точки зрения специалистов

относительно теоретического и практического аспектов типологических исследований, рассматриваются основные научные труды, послужившие теоретической базой для данной диссертации. Кратко представляется также история научного изучения грамматики персидского языка.

Объектом исследования являются именные грамматические категории числа, падежа, актуализации существительных и степеней сравнения прилагательных.

Первая глава диссертации посвящена сопоставительному исследованию категории числа. Из именных категорий в языках мира наиболее универсальной является категория числа. В рассмотрении этой категории обращено внимание на два основных типа противопоставлений: противопоставление по единственности–множественности и противопоставление по исчисляемости и неисчисляемости предметов.

Во второй главе исследуется категория актуализации. С точки зрения грамматического значения категория актуализации конкретизирует отношения предметов к участникам и к ситуации коммуникации в плане их определенности и неопределенности. В двух разделах этой главы анализируются планы содержания и выражения этой категории в сопоставляемых языках, выявляются их специфические особенности.

В третьей главе рассматривается категория падежа. Падеж является наиболее сложным из именных грамматических категорий. Исследование падежа в первую очередь затрудняется тем обстоятельством, что он представлен не во всех языках. Следовательно, типологическое описание категории падежа подразумевает анализ соответствующих способов выражения их грамматических значений в языках, не имеющих этой категории. В этой главе исследуются основные падежные значения армянского языка и выявляются соответствующие им специфические конструкции (предложно-последельные сочетания) в персидском.

В четвертой главе рассматривается категория степеней сравнения в двух языках. С семантической точки зрения эта категория выражает почти одинаковые отношения во всех языках. Отношения сравнения можно рассматривать в двух планах – в плане равенства и в плане различий в степени выражения (неравенства) признака. С морфологической точки зрения различия между категориями степеней сравнения современного армянского и современного персидского языка сводятся к аналитическим и флективным формам. Последний тип присущ персидскому и образован под влиянием арабского языка.

В заключении представлены основные выводы, вытекающие из сопоставительного анализа исследуемых языков.

GARIK GAGIK GRIGORYAN

**CONTRASTIVE ANALYSIS OF NOMINAL GRAMMATICAL CATEGORIES OF
MODERN ARMENIAN AND MODERN PERSIAN**

Thesis for the PhD of Philology, specialty 10.02.02.- “General and comparative linguistics”

Defense will be held on June 27, 2016, at 15⁰⁰, at the session of Specialized Council on Linguistics 019 of HAC in the Institute of Language after Hr.Acharyan NAS RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich str.15).

SUMMARY

Studies on Armenian-Iranian language relations have always been in the focus of attention of Armenian linguists. In its earlier stages Armenian philology mainly dealt with issues of origin and historical ties of the two languages. This tendency is also prevalent in the study of Persian published in other languages.

In traditional Persian grammar definition of grammatical features relevant to that language is usually described with Arabic terminology which by origin is fitted to grammatical peculiarities of Arabic language itself. Such works mainly focus on issues like morphology, stylistics, wearers topics as phonetics, syntax, typology aren't properly examined.

Anyway, during the recent decades the situation is gradually improving and in publications dedicated to Persian grammar the above mentioned disciplines also have their share. The current dissertation is also intended to have its place among such works.

Contrastive linguistics is the comparative analysis of two or more languages which aims to discover common features and differences in their grammatical structure as well as finding peculiarities of certain language which can be unnoticed during one sided study of that language. Though contrastive linguistics is considered as one of “young” linguistic disciplines contrastive approach itself can be found in different grammatical works since antiquity.

In dissertation nominal grammatical categories of Modern Armenian and Modern Persian are examined.

In preface the short history of this discipline is given together with opinions of specialist on its theoretical and practical implications. We also discuss here main scientific works on which the current dissertation is based.

Among the nominal categories number is the most practiced one in languages of the world. The study of this category is based on the observation of two different oppositions. The first one is opposition between singular and plural. The second one

exists between countable and uncountable nouns. Number category is examined in the first chapter of the dissertation.

Actualization is another nominal grammatical category. From this point of view actualization concretizes of nouns towards the situation and the subjects of communication. The grammatical category is examined in the second chapter.

Case is the most complex one among the nominal categories. Research on the category of case is more difficult considering the fact that in certain languages this category exists, in other ones not. So, typological description of the case category first of all entails analysis of corresponding grammatical markers. The case category is examined in the third chapter. Here from one side we describe the case category of Armenian taking it as the norm of comparison, on the other side respective grammatical meanings of Persian with their means of expression are shown.

In the fourth chapter category of adjective comparison degrees is examined. From semantic point of view this category expresses almost identical relations in all languages. Those relations first of all express opposition between neutral form (meaning equality) from one side, then comparative and superlative on the other side (meaning inequality). From morphological point of view Modern Armenian and Modern Persian express opposition of flective and analytical forms.

In the conclusion the main outcomes of the contrastive analysis between Modern Armenian and Modern Persian are presented.